

- 5 Ապա առ օրին յոյժ ուրախ լինէր,
Յիշեալ ըզսուրբ տառս զանձըն ըսփոփէր,
Եթէ զոր սիրէ խրատէ Տէր մեր,
Ի՛ երանի մարդոյ զոր խրատէ նոյն Տէր:
- 6 Այսուիկ եւ այլովք բանիւք յուսադիր
Յիշեալ ըզճրգունս անձանց խաշակիր
Հալածեցելոց զերանին եւ ձիր
Անդորրիւր սրբախ տոկեալ անձանձիր:
- 7 Եւ յանձն արարեալ զանձն իւր Աստուծոյ՝
Առաջադէր իսկ կորագլուխ կալոյ
Առաջի կամաց արարչին իւրոյ,
Եւ տանիլ որում եւ իցէ պատժոյ:
- 8 Չաւուշն ապաքէն կարի փութարար
Առեալ զիւր կապեալն եւ զըսպասարար,
Եւ ըզՏէր Պետրոս Սարգսին հարկահար
Ժամանէր նաւու ի Պօղազ Հիսար:
- 9 Ուր իջեւանեալ ի տան ինչ անձուկ՝
Պահէր ըզմատնեալն ի խորշ մի ծածուկ,
Ըսպասեալ նաւու նաւելոյ յաստուկ՝
Առ կիպրոս կըղզին ուր բանտն էր տաղտուկ:
- 10 Անդրէն Հայք ոմանք հանդերձ երիցօք
Այց առնել Սարգսի փութային ցաւօք,
Զոր եւ ըսփոփեալ մըխիթարանօք՝
Լընուին ըզնա կարեւոր կարեօք:
- 11 Տեսեալ Չաւուշին յետ փոքր ինչ աւուր
Թէ անդ առ կիպրոս նաւ ոչ հանդիպիւր
Առ ոչ ըսպասել անդր եւ եւս ի զուր
Մըտածէր խաղալ անտի նախ այլուր: